# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2013 թվականի N 337 -Ն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ (ՆԿԱՐԱԳԻՐԸ), ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1281-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել՝

1) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի կիրառման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

1) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի նմուշը (նկարագիրը)՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության ազգային նշանի պատկերը, դրան

ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» N 1281-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 12 ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. ապրիլի 11
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 14 -ի N 337 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱ-ՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են համապատասխանության ազգային նշանի (այսուհետ՝ համապատասխանության նշան) կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն այն իմաստը, որը սահմանված է «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում:

3. Համապատասխանության նշանը կիրառվում է կանոնակարգվող ոլորտում արտադրանքի (այսուհետ՝ արտադրանք) համար և ցույց է տալիս, որ արտադրանք արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվող նրա լիազոր ներկայացուցիչը գործող տեխնիկական կանոնակարգերի բոլոր պահանջներով համոզվել է արտադրանքի համապատասխանության մեջ՝ տվյալ արտադրանքը ենթարկելով համապատասխան տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման ընթացակարգերին:

4. Այն արտադրանքի համար, որի վրա տարածվում են համապատասխանության նշանի կիրառում նախատեսող մի քանի տեխնիկական կանոնակարգեր, տվյալ նշանով մակնշումը ցույց է տալիս տվյալ արտադրանքի՝ բոլոր կիրառելի տեխնիկական կանոնա-կարգերի պահանջների համապատասխանությունը:

5. Կանոնակարգվող ոլորտի այն արտադրանքը, որի տեխնիկական կանոնակարգը նախատեսում է համապատասխանության նշանի կիրառում, պետք է մակնշվի համապատասխանության նշանով:

6. Համապատասխանության նշանը դրոշմվում է տեխնոլոգիական ցանկացած եղանակով, որն ապահովում է արտադրանքի շահագործման ամբողջ ընթացքում պատկերի ամբողջականությունը, հստակությունն ու վերջինիս ջնջվելու (մաքրվելու) հնարավորության բացառումը:

7. Տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության նշանը կիրառվում է տվյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող և դրա օբյեկտ հանդիսացող ամբողջ արտադրանքի համար: Տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի դեպքում համապատասխանության գնահատման նշանակված մարմինը համապատասխանության նշանը տրամադրելիս կցում է այդ մարմնի համար նախատեսված նույնականացման կոդը:

8. Հայաստանի Հանրապետությունում համապատասխանությունը հավաստող համապատասխանության նշանը կարող է կիրառել միայն արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը:

9. Համապատասխանության նշանի տրամադրման կամ օգտագործման համար վճար չի գանձվում:

10. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու դեպքում համապատասխանության նշանը դրվում է արտադրանքի փաթեթի կամ պիտակի վրա, իսկ գործընթացների համար՝ օգտագործվում է գովազդային նյութերում:

11. Համապատասխանության նշանով նույն արտադրանքը միաժամանակ կարող է կրել նաև այլ համապատասխանությունը փաստող օտարերկրյա նշաններ՝ պայմանով, որ համապատասխանության նշանի հետ տվյալ նշանները թյուրիմացություն չեն առաջացնի: Այլ

նշաններ կարող են կիրառվել այն պայմանով, որ նշանների կիրառման հետևանքով համապատասխանության նշանի տեսանելիությունն ու հստակությունը չեն վատթարանա:

12. Տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման չենթարկված արտադրանքի և գործընթացների համար արգելվում է համապատասխանության նշանի կիրառումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 14 -ի N 337 - Ն որոշման

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ (ՆԿԱՐԱԳԻՐԸ)

1. Համապատասխանության նշանը բաղկացած է հետևյալ տառերից՝ Հ, Տ և Կ, ինչը համապատասխանաբար նշանակում է «Հայաստանի տեխնիկական կանոնակարգ»:

2. Համապատասխանության նշանի գրաֆիկական պատկերը ներկայացված է N 1 ձևում:

3. Համապատասխանության նշանը կիրառելիս պետք է ապահովվի համապատասխանության նշանի հստակությունը և տեսանելիությունը, ինչպես նաև մակնշվածքի ամրությունը:

4. Համապատասխանության նշանի տառերն իրարից տարանջատվում են սպիտակ ֆոնով: Համապատասխանության նշանի յուրաքանչյուր տառի արտաքին և ներքին շերտերը սև են՝ մեջտեղում տարանջատվելով սպիտակ ֆոնով:

5. Համապատասխանության նշանի բարձրության և լայնության միջև պետք է պահպանվի 2:5 հարաբերակցություն: Համապատասխանության նշանի բարձրությունը պետք է լինի 5 մմ-ից ոչ պակաս:

6. Համապատասխանության նշանի ներքևի մասում պետք է նշվի տվյալ մարմնի համար նախատեսված նույնականացման կոդը:

Նկ 1. Համապատասխանության նշանի գրաֆիկական պատկեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

kar337